ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ.մարտի 29-ին, N 147-Ա
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի՝ 2022 թվականի մարտի 24-ի գրությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 3-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Ավետիսյան Գրիգոր Համբարձումի>> բառերը փոխարինել <<Քոթանյան Շուշան Գևորգի>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 30.03.2022 12:42:45 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. մարտի 29-ին, N 146-Կ

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԶԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ռ. Ղազարյանի 2022 թվականի մարտի 29-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

2022 թվականի մարտի 29-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել տնօրենի ուսումնական գծով տեղակալ Ռուզաննա Ղազարյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

X

VERIFIED OCSP 30.03.2022 12:45:02 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 29-ին, N 145-Ա
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և 16-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

2022 թվականի մարտի 29-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արսեն Ալեքսանյանի լիազորությունները համարել դադարեցված:

X

VERIFIED OCSP 30.03.2022 12:43:59 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ մարտի 30-ին, N 144-Կ
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի՝ 28.03.2022 թվականի թիվ 01/09.3/6591-2022 գրությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Ապարանի տարածաշրջանի 6-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Գրիգորյան Լևոն Վաչագանի>> բառերը փոխարինել << Թովմասյան Արիս Գագիկի >> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 30.03.2022 10:51:59 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 143-Ա

09 03 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 24 և 25-րդ կետերով և հաշվի առնելով «Աշտարակի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2022 թվականի մարտի 18-ի թիվ ԱՀ-01/ S N22-22 գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել՝
2. «Աշտարակի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի՝

1.1. եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

1.2. հաստիքացուցակը՝ համաձայն N2 հավելվածի

1.3. վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների, հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների ցուցակը համաձայն N3 հավելվածի

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվա հաջորդ օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից սկսած իրավահարաբերությունների վրա:

X

VERIFIED OCSP 29.03.2022 10:11:41 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 28

N 142-Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 136-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշման 2-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը և ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի մարտի 21-ի N ԱԱ/05/6282-2022 գրությունը՝ **որոշում եմ**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2007 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 136-ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

X

VERIFIED OCSP 28.03.2022 15:41:18 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 28-ին, N 141-Ա
ք. Աշտարակ

ՍԱՐԳԻՍ ՖԵՐԴԻՆԱՆԴԻ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՕՇԱԿԱՆԻ Փ. ԲԱԲԿԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2022 թվականի հունվարի 21-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ս. Հովնանյանի 2022 թվականի հունվարի 24-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

Սարգիս Ֆերդինանդի Հովնանյանին 2022 թվականի մարտի 29-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

X

VERIFIED OCSP 28.03.2022 15:04:54 GMT+4

Подписано: MOYSISYAN SERGEY 3309890457

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 28-ին, N 140-Ա
ք. Աշտարակ

ՍԱՐԳԻՍ ՖԵՐԴԻՆԱՆԴԻ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՕՇԱԿԱՆԻ Փ. ԲԱԲԿԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

2022 թվականի մարտի 28-ից Սարգիս Հովնանյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2017 թվականի մարտի 28-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

VERIFIED OCSP 28.03.2022 15:03:17 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309850457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 28

N 139-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Վարչապետի աշխատակազմի 23.03.2022թ. թիվ 04/03.14/8575-2022 հանձնարարականով՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում ստեղծել աշխատանքային խմբեր՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի իրազեկման և շահառուների խմբերի ցանկի ընդլայնման վերաբերյալ համայնքների ղեկավարների և բնակավայրերի վարչական ղեկավարների աջակցությամբ՝ համաձայն հավելվածի:

X

VERIFIED OCSP 28.03.2022 09:42:41 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2022թ.
մարտի 28-ի N 139-Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՁԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Խումբ 1

Յու.Ազատյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /խմբի ղեկավար/

Դ.Մուրադյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ

Գ. Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ

Խումբ 2

Թ.Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանիգյուղատնտեսության և բնապահպանության վարչությանբնապահպանության բաժնի պետ /խմբի ղեկավար/

Հ. Ասատրյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

Ա. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Ս. Հովսեփյան – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության խորհրդական /խմբի ղեկավար/

Գ.Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Շուխյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ավագ մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գլխավոր քարտուղար

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. մարտի 22 **N 138-Կ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 84-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 84-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության տարհանման պլանի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1.3՝ կետը, վերնագրից հետո, շարադրել նոր խմբագրությամբ՝

«Պլանում ներգրավվում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումները՝

- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան,
- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն /այսուհետ՝ ՄՓՎ/,

- Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան,
- Հայաաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարան,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամի համայնքապետարան,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարան,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավանի համայնքապետարան,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտի համայնքապետարան,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարան,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարան,
- Արագածոտնի մարզի տարածքում գործող «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի ստորաբաժանումներ,
- Արագածոտնի մարզի տարածքում գործող «ՀԷՑ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի ստորաբաժանումներ,
- Արագածոտնի մարզի տարածքում գործող «Վիոլա Ջուր» ՓԲԸ-ի ստորաբաժանումներ,
- Արագածոտնի մարզի տարածքում գործող «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումներ,
- Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արագածոտնի մարզային կենտրոն,
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղ:»

2) 1.4 կետի վերջին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին» 346-Ն որոշում:»

3) 1.6 կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը տեղակայված է Հայաստանի Հանրապետության արևմտյան մասում: Մարզը սահմանակից է արևելքից՝ Կոտայքի մարզին, հյուսիսից՝ Լոռու մարզին, հյուսիս-արևմուտքից՝ Շիրակի մարզին, հարավից՝ Արմավիրի մարզին, հարավ-արևմուտքից Թուրքիային: Մարզի տարածքը զբաղեցնում է 2753 քմ.կմ, ունի 115 բնակավայր, որից 3 քաղաքային: Մարզի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 137818

մարդ, որից՝ քաղաքային բնակավայրերում 35782 մարդ, գյուղական բնակավայրերում 102036 մարդ: Մարզի 3 բնակավայրեր գտնվում են ՀԱԷԿ-ից 5 և 5-10 կմ հեռավորության վրա, որոնցից ենթակա են տարհանման 2824 մարդ:»

4) 1.6 կետի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀԱԷԿ-ի վթարի կամ սպառնալիքի դեպքում իրականացվում է բնակչության ընդհանուր տարհանում՝ անչափահասների, հիվանդների և հաշվանդամների առաջնահերթության սկզբունքով, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 3 բնակավայրերից՝

ա) Նոր Ամանոս բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 646 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի Արուճ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 926 մարդ, Նոր Ամանոս-Արուճ երթուղով,

բ) Արագածոտն բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 869 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի Կոշ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 2300 մարդ, Արագածոտն-Կոշ երթուղով,

գ) Նոր Եդեսիա բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 1309 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի ՈՒջան բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 2006 մարդ, Նոր Եդեսիա-Արագածոտն-ՈՒջան երթուղով:»

5) 1.7 կետի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ

«Տարհանվող բնակչության և տեխնիկայի սանիտարական մշակման նպատակով ստեղծվում են սանիտարական լվացման կետեր՝

- Արագածոտն և Նոր Եդեսիա բնակավայրերի համար Երևան-Գյումրի մայրուղու Արագածոտն բնակավայրի ճանապարհի մուտքին՝ խմելաջրի գլխավոր գծի մոտ,
- Նոր Ամանոս բնակավայրի համար Արուճ բնակավայրի մուտքին՝ ջրավազանի մոտ:»

6) 1.7 կետի 4-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ

«Դոզաչափական հսկողությունը իրականացվում է բնապահպանական ոլորտը վերահսկող պետական կառավարման մարմնի համապատասխան ստորաբաժանումների կողմից:»

7) 1.7 կետի 8-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀԱԷԿ-ի վթարի կամ վտանգի սպառնալիքի դեպքում << Արմավիրի մարզից << Արագածոտնի մարզ են տարհանվում հետևյալ բնակավայրերը՝

ա) Արշալույս բնակավայրից 3898 մարդ տարհանվում է Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 4313 մարդ,

բ) Մայիսյան բնակավայրից 2010 մարդ տարհանվում է Թալին համայնքի Թալին քաղաք, որի բնակչության թիվը կազմում է 6974 մարդ,

գ) Արագած բնակավայրից 2882 մարդ տարհանվում է Աշտարակ համայնքի Օշական բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 5950 մարդ,

դ) Հայթաղ բնակավայրից 2926 մարդ տարհանվում է Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաք, որի բնակչության թիվը կազմում է 22625 մարդ:»

8) 1.8 կետի 1-ին նախադասության մեջ ««Աշտարակ կաթ» ՓԲԸ» բառերը փոխարինել ««Նաիրի Լենդ» ՍՊԸ» բառերով:

9) 1.9 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի Հալավար, Ծիլքար, Վ.Սասնաշեն, Ն.Սասնաշեն, Հացաշեն, Կաքավաձոր 2, Շենիկ, Կաթնաղբյուր 1, Դավթաշեն, Աշնակ 1, Վ.Թալին 1, Վ.Բազմաբերդ, Ագարակավան, Ոսկեթաս, Իրինդ, Կոշ, Շղարշիկ և Ծաղկաշեն ջրանբարների պատվարների փլուզման ժամանակ հնարավոր է աղետալի ջրածածկում: Մասնակի ջրածածկման գոտում կհայտնվեն Ապարան, Վարդենիս, Գեղարոտ, Վ.Սասնաշեն, Ն.Սասնաշեն, Հացաշեն, Կաքավաձոր, Ագարակավան, Արուճ, Շամիրամ, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Աշնակ, Թալին, Վ.Բազմաբերդ, Ն.Բազմաբերդ, Կարմրաշեն, Իրինդ, Արագածոտն, Շղարշիկ, Եղնիկ, Քուչակ, Ծաղկաշեն և Շենավան բնակավայրերի տարածքները կամ 5102 մարդ՝

- Հալավարի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Ապարան և Վարդենիս բնակավայրերի տարածքների 10-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 690 մարդ,
- Ագարակավանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Ագարակավան բնակավայրի տարածքի 40 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 420 մարդ,
- Աշնակ 1 ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Աշնակ բնակավայրի տարածքի 50 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 450 մարդ,
- Ծիլքարի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Գեղարոտ բնակավայրի տարածքի 10 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 60 մարդ,
- Իրինդի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Իրինդ և Կաթնաղբյուր բնակավայրերի տարածքների 10-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 206 մարդ,
- Վ.Թալին 1 ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Թալին քաղաքի տարածքի 5 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 350 մարդ,
- Դավթաշենի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Դավթաշեն և Վ.Սասնաշեն բնակավայրերի տարածքների 10-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 105 մարդ,
- Կաքավաձոր 2 ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն՝ Կաքավաձոր բնակավայրի տարածքի 25 տոկոսը, Ագարակավան, Շամիրամ և Արուճ բնակավայրերի տարածքների 10-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 577 մարդ,
- Կոշի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Արագածոտն բնակավայրի տարածքի 10 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 87 մարդ,
- Հացաշենի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Հացաշեն բնակավայրի տարածքի 10 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 20 մարդ,

• Ն.Սասնաշենի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Ն.Սասնաշեն բնակավայրի տարածքի 25 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 257 մարդ,

• Շղարշիկի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Շղարշիկ և Եղնիկ բնակավայրերի տարածքների 10-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 83 մարդ,

• Վ.Բազմաբերդի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Վ.Բազմաբերդ և Ն.Բազմաբերդ բնակավայրերի տարածքների 20-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 419 մարդ,

• Վ.Սասնաշենի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Վ.Սասնաշեն բնակավայրի տարածքի 10 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 40 մարդ,

• Կաթնաղբյուր 1 ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Կաթնաղբյուր բնակավայրի տարածքի 50 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 564 մարդ,

• Ոսկեթասի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Կարմրաշեն բնակավայրի տարածքի 15 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 74 մարդ,

• Շենիկի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի Մաստարա բնակավայրի տարածքի 15 տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 400 մարդ,

• Ծաղկաշենի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն՝ Ծաղկաշեն բնակավայրի տարածքի 20 տոկոսը, Շենավան և Քուչակ բնակավայրերի տարածքի 5-ական տոկոսը, ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 300 մարդ:

Ջրամբարի վթարից բնակչությանը սպառնացող վտանգի մասին ջրամբարի հսկիչը անմիջապես ահազանգում է ՄՓՎ ՃԿԿ: Էլ. շչակների միջոցով տեղեկացվում է բնակչությանը սպառնացող վտանգի մասին, շչակները միացվում են ՄՓՎ ՃԿԿ-ի կրտսեր հրահանգչի հրահանգով՝ մեխանիկական միացման եղանակով: Ջրամբարների պատվարի փլուզման դեպքում հնարավոր ջրածածկման գոտում գտնվող բնակավայրերում առկա են Ը-40 տիպի 11 հատ, Ը-28 տիպի 10 հատ և ԼԴ-800 տիպի 8 հատ էլ. շչակներ: «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ազդանշանից հետո հեռուստատեսության, ռադիոցանցի կամ բարձրախոսի միջոցով տրվում է տեքստային հաղորդում ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի կամ փլուզման վերաբերյալ: Ստանալով մարզի տարածքում արտակարգ իրավիճակի մասին տեղեկատվությունը ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը այն հաղորդում է ՓԾ ՃԿԱԿ, ՄՓՎ պետին և նրա հրահանգով իրականացնում է ՄՓՎ անձնակազմի ազդարարում և հավաք: ՄՓՎ պետը իրավիճակի մասին զեկուցում է մարզպետին և նրա հրահանգով՝ ՄՓՎ ՃԿԿ-ի կողմից իրականացվում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովի, համապատասխան համայնքների ղեկավարների և տարհանման հանձնաժողովի նախագահի ազդարարումը:

Բնակչության տարհանումն իրականացվում է հետիոտն եղանակով՝ տեղափոխվելով նույն բնակավայրի բարձրադիր վայրեր:»

10) 2▯ կետի 12-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սահմանամերձ գոտու բնակավայրերից տարհանման հիմնական և պահեստային երթուղիները տրված են սույն պլանի հավելված N23-ում:»

11) 2▯ կետի 13-րդ պարբերությունը չեղարկել.

2▯ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 84-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության տարհանման պլանի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ, 17-րդ, 18-րդ և 23-րդ հավելվածները փոխարինել նոր լրամշակված տարբերակներով՝ համաձայն 1-ից 8 հավելվածների:

X

VERIFIED OCSP 22.03.2022 12:19:03 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 33098904

Ս▯ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. մարտի 22 **N 137-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝

Որոշումեմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ում՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) II գլխի 4-րդ բաժնի 2-րդ կետի 3-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի բնակչության թվաքանակը կազմում է 137818 մարդ, որից՝ քաղաքային բնակավայրերում 35782 մարդ, գյուղական բնակավայրերում 102036 մարդ, ըստ տարիքի՝ 0-1.5 տարեկան 2421, 1.5-7 տարեկան 9924, 7-16 տարեկան 16503, 16-62 տարեկան 91662, 63 տարեկան և բարձր 17308 մարդ, ըստ սեռի՝ 67496 կին, 70322 տղամարդ:»

2) II գլխի 4-րդ բաժնի 3-րդ կետի բ՝ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ. մարզի տարածքում կազմավորված է 9 համայնք՝ ընդհանուր թվով 115 բնակավայրով, որից՝ 3 քաղաքային, 112 գյուղական: Ըստ վիճակագրական բազայի՝ մարզի բնակելի տների քանակը կազմում է 30743, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը՝ 1088 միավոր,»

3) II գլխի 4-րդ բաժնի 6-րդ կետի բ՝ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ. գործող ջրամբարներից 19-ը՝ Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Վ.Սասնաշենի, Ն.Սասնաշենի, Հացաշենի, Կաքավաձոր 2, Շենիկի, Կաթնաղբյուր 1, Դավթաշենի, Աշնակ 1, Վ՝Թալին 1, Վ.Բազմաբերդի, Ագարակավանի, Ոսկեթասի, Իրինդի, Կոշի, Շղարշիկի, Ծաղկաշենի ջրանբարները գնահատվում են վտանգավոր, որոնցից առավել վտանգավոր են 3-ը՝ Ապարանի, Հալավարի և Կաքավաձոր 2 ջրամբարները:»

4) II գլխի 4-րդ բաժնի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«7) ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ.

ա. բենզալցակայաններ՝ 26 հատ, որից Աշտարակի տարածաշրջանում՝ 11 հատ, Ապարանի տարածաշրջանում՝ 5 հատ, Թալինի տարածաշրջանում՝ 10 հատ,

բ. հեղուկ (ՀԳԼՃԿ) և բնական (ԱԳԼՃԿ) գազի ավտոգազալցակայաններ՝ 46 հատ, որից Աշտարակի տարածաշրջանում՝ 27 հատ, Ապարանի տարածաշրջանում՝ 6 հատ, Արագածի տարածաշրջանում՝ 4 հատ, Թալինի տարածաշրջանում՝ 9 հատ:»

5) II գլխի 4-րդ բաժնի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9) ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ.

ա. մարզի բնակչության բժշկական ապահովումը իրականացվում է Աշտարակի, Թալինի, Ապարանի, Ծաղկահովիտի բժշկական կենտրոնների և Արագածավանի, Արտենիի, Ն.Բազմաբերդի, Մաստարայի, Քուչակի, Արագածի, Շենավանի, Արուճի, Ագարակի, Բյուրականի, Կոշի, Օշականի, Ոսկեվազի, Փարպիի, ՈՒջանի, Կարբիի, Սասունիկի ամբուլատորիաների և առողջության կենտրոնների ուժերով և միջոցներով,

բ. բժշկական կենտրոններում ստեղծվել են բժշկական ապահովման ուժեր՝ 66 կազմավորում 218 անձնակազմով և համալրված են 18 մարդատար /սանիտարական/ ավտոմեքենաներով,

գ. բժշկական կենտրոնների և ամբուլատորիաների հետ կապը իրականացվում է լարային և բջջային հեռախոսակապով, իսկ բժշկական կենտրոնների և սանիտարական մեքենաների միջև կապը իրականացվում է ռադիո և բջջային կապով,

դ. մարզի բժշկական կենտրոններում ծավալված է 144 մահճակալ, լրացուցիչ կարող է ծավալվել ևս 188 մահճակալ:»

6) II գլխի 5-րդ բաժնի 5▯1▯ ենթաբաժնի 3-րդ կետի ա▯ ենթակետում «94» թիվը փոխարինել «72» թվով:

7) II գլխի 5-րդ բաժնի 5▯1▯ ենթաբաժնի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՂԵՏԱԼԻ ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ՀԱՅՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ.

ա▯ Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Վ.Սասնաշենի, Ն.Սասնաշենի, Հացաշենի, Կաքավաձոր 2, Շենիկի, Կաթնաղբյուր 1, Դավթաշենի, Աշնակ 1, Վ▯Թալին 1, Վ.Բազմաբերդի, Ագարակավանի, Ոսկեթասի, Իրինդի, Կոշի, Շղարշիկի, Ծաղկաշենի ջրամբարների պատվարների փլուզման դեպքում հնարավոր է բնակելի, հասարակական, արտադրական տարածքների և ցանքատարածքների մասնակի աղետալի ջրածածկում,

բ▯ մասնակի ջրածածկման գոտում կհայտնվեն Ապարան, Վարդենիս, Գեղարոտ, Վ.Սասնաշեն, Ն.Սասնաշեն, Հացաշեն, Կաքավաձոր, Ագարակավան, Արուճ, Շամիրամ, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Աշնակ, Թալին, Վ.Բազմաբերդ, Ն.Բազմաբերդ, Կարմրաշեն, Իրինդ, Արագածոտն, Շղարշիկ, Եղնիկ, Քուչակ, Ծաղկաշեն և Շենավան բնակավայրերի տարածքները կամ 5102 մարդ, ինչպես նաև Արմավիրի մարզի որոշ բնակավայրեր:»

8) IV գլխի 11-րդ բաժնի ա▯, բ▯ և գ▯ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա. ազգաբնակչության բժշկական ապահովումը իրականացվում է մարզում գործող բժշկական կենտրոնների և ամբուլատորիաների ուժերով և միջոցներով,

բ. բժշկական կենտրոններում ստեղծվում են բժշկական ապահովման ուժեր՝ կազմավորումներ,

գ. նախապես ճշգրտվում են բժշկական կենտրոններում ծավալված մահճակալների թիվը և լրացուցիչ մահճակալների ծավալման հնարավորությունները:»

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի աղյուսակ 2-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի աղյուսակ 3-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի աղյուսակ 5-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 3-ի:

VERIFIED OCSP 22.03.2022 13:53:24 GMT+4

Հայաստան, MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. մարտի 22 **N 136-Կ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը.

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի հուլիսի 2-ի N 64-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարհանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման մարզային պլանի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) I բաժնի 3-րդ կետի 2-րդ ենթակետի ա պարբերությունում «ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալական զարգացման վարչությունը» բառերը փոխարինել «ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը» բառերով:

2) I բաժնի 3-րդ կետի 2-րդ ենթակետի բ՝, գ՝ և թ՝ պարբերություններից հանել «աշխատակազմի» բառը:

3) I բաժնի 3-րդ կետի 2-րդ ենթակետի ը՝ պարբերությունում «ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային ոստիկանությունը» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունը» բառերով

4) II բաժնի 5-րդ կետի 4-րդ ենթակետի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հատկապես բարդ իրադրություն կստեղծվի Աշտարակ, Մուղնի, Ուշի, Կարբի, Օհանավան, Արտաշավան, Հարթավան, Շողակն, Վարդենուտ, Վարդենիս, Ծաղկաշեն, Արագած, Քուչակ, Եղիպատրուշ, Շենավան բնակավայրերում:»

5) II բաժնի 5-րդ կետի 5-րդ ենթակետում «5152» թիվը փոխարինել «7406» թվով:

6) II բաժնի 5-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում ՆՊՄԻ գոտում գտնվող բնակավայրերի բնակչությունը տարհանվում է, իսկ ՇՊՄՊ գոտում գտնվող բնակավայրերի բնակչության տարհանումն իրականացվում է ընտրովի՝ ըստ ճառագայթային մոնիթորինգի տվյալների:»

7) II բաժնի 5-րդ կետի 9-րդ ենթակետում «2859» թիվը փոխարինել «2824» թվով:

8) II բաժնի 5-րդ կետի 12-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզում տարհանումն իրականացվում է հետևյալ երթուղիներով.

ա) Նոր Ամանոս բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 646 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի Արուճ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 926 մարդ, Նոր Ամանոս-Արուճ երթուղով,

բ) Արագածոտն բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 869 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի Կոշ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 2300 մարդ, Արագածոտն-Կոշ երթուղով,

գ) Նոր Եդեսիա բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 1309 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի ՈՒջան բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 2006 մարդ, Նոր Եդեսիա-Արագածոտն-ՈՒջան երթուղով:»

9) II բաժնի 5-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Տարհանվող բնակչության և տեխնիկայի սանիտարական մշակման նպատակով ստեղծվում են սանիտարական լվացման կետեր՝

ա.Արագածոտն և Նոր Եդեսիա բնակավայրերի համար Երևան-Գյումրի մայրուղու Արագածոտն բնակավայրի ճանապարհի մուտքին՝ խմելաջրի գլխավոր գծի մոտ:

բ.Նոր Ամանոս բնակավայրի համար Արուճ բնակավայրի մուտքին՝ ջրավազանի մոտ:»

10) II բաժնի 5-րդ կետի 16-րդ ենթակետում «278» թիվը փոխարինել «43» թվով:

11) II բաժնի 5-րդ կետի 17-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի 18 առավել վտանգավոր ջրամբարների պատվարի փլուզման դեպքում մասնակի աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի 25 բնակավայր՝ մոտ 4845 բնակչությամբ:»

12) II բաժնի 7-րդ կետի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

Կենսաապահովման համակարգի օբյեկտները և նրանց հնարավորությունները

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հնարավորությունը
1	«ԳՆԹՈՒՆԻՔ» ՍՊԸ հացի արտադրություն	1000-1500 կգ/օր
2	«Կարեն Հովհաննիսյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
3	«Գոռ Հունանյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
4	«Ժորա Մելիքյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
5	<<Արմեն Բունիաթյան>> ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
6	«Մարուսյա Թումանյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
7	<<Թամարա-Ֆրութ>> ՓԲԸ պահածոների արտադրություն	1500 կգ/օր
8	«Նաիրի Լենդ» ՍՊԸ կաթնամթերքի արտադրություն	2000 կգ./օր

13) III բաժնի 10-րդ կետի 5-րդ ենթակետում «կրտսեր դիսպետչերը» բառերը փոխարինել «կրտսեր հրահանգիչը» բառերով, իսկ «Երևանի կայազորի» բառերը փոխարինել «համապատասխան կայազորի» բառերով:

14) VI բաժնի 27-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը տեղակայված է Հայաստանի Հանրապետության արևմտյան մասում: Մարզը սահմանակից է արևելքից՝ Կոտայքի մարզին, հյուսիսից՝ Լոռու մարզին, հյուսիս-արևմուտքից՝ Շիրակի մարզին, հարավից՝ Արմավիրի

մարզին, հարավ-արևմուտքից Թուրքիային: Մարզի տարածքը զբաղեցնում է 2753 քմ.կմ, ունի 115 բնակավայր, որից 3 քաղաքային: Մարզի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 137818 մարդ, որից՝ քաղաքային բնակավայրերում 35782 մարդ, գյուղական բնակավայրերում 102036 մարդ: Ըստ վիճակագրական բազայի՝ մարզի բնակելի տների քանակը կազմում է 30743, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը՝ 1088 միավոր:»

15) VI բաժնի 28-րդ կետի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝

Արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) և ռազմական դրության դեպքում Արագածոտնի մարզի բնակչության տարհանման հաշվարկ

Հ/Հ	Անվանումը	Տարհանման ենթակա բնակչություն (մարդ)
1	2	3
1՝ Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարների դեպքում		
1	«Նաիրի Լենդ» ՍՊԸ, Արագածոտնի մարզ, գ.Աղձք	45 աշխատակից
2	«Աշտարակի պտուղ բանջարեղեն գրասենյակ» ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գ.Կարբի	12 աշխատակից
3	«Թամար Ֆրուտ»ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գ.Կարբի	35 աշխատակից 43 բնակիչ
Ընդամենը քիմիական վտանգավոր օբյեկտների վթարների դեպքում		135 մարդ
2՝ Հիդրոտեխնիկական կառույցների վթարի դեպքում		
1	Հալավարի ջրամբար	690
2	Ագարակավանի ջրամբար	420
3	Աշնակ 1 ջրամբար	450
4	Ծիլքարի ջրամբար	60
5	Իրինդի ջրամբար	206
6	Վ՝Թալին 1 ջրամբար	350

7	Դավթաշենի ջրամբար	65
8	Կաքավաձոր 2 ջրամբար	578
9	Կոշի ջրամբար	87
10	Հացաշենի ջրամբար	20
11	Ն.Սասնաշենի ջրամբար	707
12	Շղարշիկի ջրամբար	83
13	Վ.Բազմաբերդի ջրամբար	419
14	Վ.Սասնաշենի ջրամբար	40
15	Կաթնաղբյուր 1 ջրամբար	564
16	Ոսկեթասի ջրամբար	74
17	Շենիկի ջրամբար	400
18	Ծաղկաշենի ջրամբար	300
Ընդամենը հիդրոտեխնիկական կառույցների վթարի դեպքում		4845
3. Ճառագայթային վտանգավոր օբյեկտ՝ ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում		
1	գ.Արագածոտն	869
2	գ.Նոր Ամանոս	646
3	գ.Նոր Եդեսիա	1309
Ընդամենը ճառագայթային վտանգավոր օբյեկտ՝ ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում		2824
4. Ուժեղ երկրաշարժի դեպքում		
Ընդամենը ՀՀ Արագածոտնի մարզ 15 բնակավայրերում ուժեղ երկրաշարժի դեպքում		3256 մարդ, որից զոհեր 1870 մարդ, տուժածներ՝ 1386 մարդ, այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 698 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 374 մարդ և թեթև վիրավորներ՝ 314 մարդ

5. Սելավների առաջացման դեպքում (ըստ՝ Հայաստանի Հանրապետության տարհանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման հանրապետական պլանի)		
Ընդամենը Արագածոտնի մարզում սելավների առաջացման դեպքում		1220
6. Ռազմական դրության ժամանակ		
1	Արագածավան	2612
2	Արտենի	1524
3	Թլիկ	52
4	Գետափ	47
5	Հակո	56
6	Սորիկ	76
7	Նոր Արթիկ	240
8	Կանչ	43
Ընդամենը ռազմական դրության ժամանակ		4650

16) VI բաժնի 31-րդ կետը չեղարկել:

X

VERIFIED OCSP 22.03.2022 15:50:38 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. մարտի 22 **N 135-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանի 6.1.1 կետը և ղեկավարվելով Հայսատանի Հանրապետության կառավարության 2015թ-ի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման 6-րդ կետի 3-րդ ենթակետի և 18-րդ կետի դրույթները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022թ-ի ապրիլի 12-ին Հայասատանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արագածոտնի մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈՒ) «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով:
2. ՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝
1) ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Էդգար Փարվանյանին.
2) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Դմիտրի Պետրոսյանին.
3. Հաստատել ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
4. ՇՈՒ-ին ընդգրկել մարզի ԱԻ և տարահանման հանձնաժողովներին, Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը, Աշտարակ, Թալին քաղաքներին, Ն.Եդեսիա, Ն.Ամանոս, Արագածոտն, Արուճ, Կոշ, ՈՒջան, Ոսկեվազ, Օշական գյուղերը, «Աշտարակի և

Թալինի բժշկական կենտրոններին», ոստիկանության մարզային վարչությանը, «ՊՀՀՏ Արագածոտնի փորձագիտական կենտրոն» ՊՓԲԸ-ին, <ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ> ՓԲԸ-ին, Մուսալեռ ՓԲԸ մասնաճյուղի Աշտարակի տեղամասին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ-ին, «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայությանը»:

5. ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետին.

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2022թ. ապրիլի 5-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

4) ճշգրտել «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության» պլանը.

5) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

6) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2022թ. ապրիլի 10-ին:

6. ՇՈՒ-ի մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

2) մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հայկական ատոմային էլեկտրակայանի վթարային հակազդման» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային տարահանման» պլաններով նախատեսված միջոցառումները,

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

X

VERIFIED OCSP 22.03.2022 11:42:49 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. մարտի 22 N 134-Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 84-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետով, 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 34-րդ հոդվածի 1-ին կետը.

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 84-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության տարհանման պլանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) N 2 հավելվածը փոխարինել նոր լրամշակված տարբերակով:

X

VERIFIED OCSP 22.03.2022 12:17:21 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 21 -ին, N 133-Ա
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ Հ.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ա.Վարդանյանի 2022 թվականի մարտի 21-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2022 թվականի մարտի 21-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակ քաղաքի Ս.Շահազիզի անվան հ.2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալ Անահիտ Վազգենի Վարդանյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

X

VERIFIED OCSP 21.03.2022 11:12:15 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 21-ին, N 132-Ա
ք. Աշտարակ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՄՈՅԻ ԲԱԼԱՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ Հ.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

2022 թվականի մարտի 21-ից Հովհաննես Կամոյի Բալայանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակ քաղաքի Ս.Շահազիզի անվան հ.2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2017 թվականի մարտի 20-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

X

VERIFIED OCSP 21.03.2022 11:13:19 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890459

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 18-ին, N 131-Ա
ք. Աշտարակ

ԱԶԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետով և հիմք ընդունելով Ա.Ղուկասյանի 2022 թվականի մարտի 18-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2022 թվականի մարտի 21-ից Ազատ Սամվելի Ղուկասյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

X

VERIFIED OCSP 18.03.2022 17:05:25 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY,3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2022թ. մարտի 18 N 130-Ա

<<ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 119-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

